ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆԻՍ 2004)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, բանկային համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և բանկային
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և բանկային վիճակագրությունում ընդգրկված է
ՀՀ միջազգային պահուստների, փողի ագրեգատների,
ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերաբերյալ
տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

Տնտեսական աճ: 2004 թ. հունվար-հունիսին տնտեսական աճը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 9.2%: ՀՆԱ աճը հիմնականում պայմանավորվել է ծառայությունների (ազդեցությունը ՀՆԱ աճի վրա կազմել է 5.6 տոկոսային կետ), արդյունաբերության (1.3) և գյուղատնտեսության (1.3) աճով: ՀՆԱ դեֆլյատորը 2004 թ. հունվար-հունիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կազմել է 106.2%:

Գնաճ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2004թ. հունիսին գրանցվել է սպառողական գների ընդհանուր մակարդակի 0.1% անկում՝ հիմնականում պայմանավորված պարենային ապրանքների «Բանջարեղեն և կարտոֆիլ» (-9.4%), «Միրգ» (19.3%), «Միս և մսամթերք» (2.6%), «Կաթ և կաթնամթերք» (-4.1%) և «Հացամթերք» (-0.7%) ապրանքախմբերի գների փոփոխությամբ, որոնք ապահովել են գնաճի համապատասխանաբար -0.7, 0.7, 0.3,-0.2 և -0.1 տոկոսային կետերը:

2003 թ. դեկտեմբերի համեմատությամբ սպառողական գների աճը կազմել է 4.5%: Ընդ որում, պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների աճը կազմել է 6.2%, ոչ պարենային ապրանքների գներինը՝ 0.5%, իսկ ծառայությունների սակագներինը՝ 1.4%:

2004 թ. հունվար-հունիսին, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, սպառողական գների ինդեքսը կազմել է 107.6%, իսկ հունիսին, 2003 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 106.5%:

Բնականոն գնաճը[1] հունիսին, մայիսի համեմատությամբ, կազմել է -0.13%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ՝ 1.63%: 2004 թ. հունվար-հունիսին, 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ, բնականոն գնաճը կազմել է 5.67%, իսկ հունիսին, 2003 թ. նույն ամսվա համեմատությամբ՝ 5.41%:

Արտաքին հատված: 2004 թ. հունվար-հունիսին ապրանքների արտահանումը (FOB գներով) կազմել է 340.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 7.2%-ով: Արտահանման աճը պայմանավորված է հիմնականում արտահանման մեջ շուրջ 14.3 % կազմող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և 6.5 % կազմող «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 131.1 % և 91.1 % աճով:

Ներմուծումը (CIF գներով) կազմել է 625.1 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելանալով 3.8 %-ով: Աճը պայմանավորված է հիմնականում ներմուծման մեջ շուրջ 8.2 % կազմող «Բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբի ծավալի 52.1 % աճով: Հունվար-հունիսին ավելացել են նաև ներմուծման մեջ մոտ 7.8 % կազմող «Պատրաստի սննդի արտադրանք» և 6.1 % կազմող «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալները համապատասխանաբար 34.5 % և 28.9 %-ով:

Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ցուցանիշը հաշվի առնելու՝ արտահանումն ավելացել է 37.9 %-ով, իսկ ներմուծումը՝ 12.1 %-ով:

Արդյունքում, 2004 թ. հունվար-հունիսին առևտրային հաշվեկշռի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, փոփոխություն չի կրել (առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշի՝ նվազել է 0.8-ով) և կազմել է 285.1 մլն ԱՄՆ դոլար:

2004 թ. հունվար-հունիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 558.2 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեքավորվելով 4.8%-ով: Հունիսին ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 543.9 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով 1.6%-ով: 2004 թ. հունվար-հունիսին եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի միջին անվանական հաշվարկային փոխարժեքը կազմել է 685.2 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արժեզրկվելով 5.8%-ով: Հունիսին եվրոյի միջին փոխարժեքը կազմել է 660.3 դրամ՝ նախորդ ամսվա համեմատությամբ արժեքավորվելով 0.3%-ով:

Պետական հատված: Հունիսին պետական բյուջեի կատարման գործընթացն ուղեկցվել է հարկային եկամուտների ամսական ծրագրի գերակատարմամբ և դրամաշնորհների՝ նախատեսվածից պակաս

[1] *2004 թ. հունիսից ՀՀ ԿԲ-ն, որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ, հրապարակում է 15 տոկոս հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը: Հաշվարկման մեթոդաբանությունը տե՛ս «ՀՀ ԿԲ բանբեր» (2004 թ. 1-ին եռամսյակ) պարբերականում:*

ստացմամբ: Արդյունքում, բյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները կազմել են 23.0 մլրդ դրամ (ծրագրված 25.2 մլրդ դրամի փոխարեն), իսկ հարկային եկամուտները՝ 21.4 մլրդ դրամ (ծրագրված 20.0 մլրդ դրամի փոխարեն): Հարկային եկամուտների միջին օրական մուտքերը ամսվա ընթացքում կազմել են 973 մլն դրամ՝ ծրագրված 911 մլն դրամի և նախորդ տարվա հունիսի 910 մլն դրամի փոխարեն:

Հատկանշական է, որ հարկերի՝ նախորդ տարվա համեմատ ավելի համաչափ հավաքագրման տարեսկզբից դրսևորված դինամիկան շարունակվել է նաև հունիսին: Այսպես, վերջին երեք օրվա հարկային եկամուտները կազմել են ամսվա հարկերի 27.9%-ը՝ նախորդ տարվա 45%-ի համեմատ, իսկ վերջին օրվա հարկային մուտքերը կազմել են ամսվա հարկերի 18%-ը՝ նախորդ տարվա 49%-ի համեմատ:

Բյուջեի ծախսերը հունիսին կազմել են 21.3 մլրդ դրամ՝ ծրագրվածին համապատասխան: Արդյունքում, բյուջեի հավելուրդը կազմել է 1.7 մլրդ դրամ՝ ծրագրված 3.8 մլրդ դրամի փոխարեն: Պետական արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող եկամուտների փոքր-ինչ գերազանցում է գրանցվել. 1.5 մլրդ դրամ զուտ մուտքերի դիմաց փաստացին կազմել է 1.6 մլրդ դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ ՀՀ կառավարության զուտ պարտավորություններն ամսվա ընթացքում նվազել են 3.8 մլրդ դրամով:

Դրամավարկային քաղաքականություն: Հունիսին, հաշվի առնելով փողի առաջարկի աճին նպաստող սպասվելիք ինքնավար հոսքերը՝ նախորդ ամսում կիրառված ներքաշող գործիքների մարումները և Կառավարության միասնական հաշվի միջոցներից ծախսումները, ՀՀ ԿԲ կողմից ծրագրվել էր փողի բազան ավելացնել ավելի քան 3.3 մլրդ դրամով՝ ամսվա վերջին ապահովելով 107.2 մլրդ դրամ մակարդակ: Նախատեսվում էր նաև 1.8 մլրդ դրամին համարժեք արտաքին պարտքի սպասարկում և 1.5 մլրդ դրամին համարժեք դրամաշնորհի ստացում, որոնց փոխադարձ չեզոքացման արդյունքում թե՛ ԿԲ ՁԱԱ-ի և թե՛ փողի բազայի էական փոփոխություններ չէին դիտվելու:

Փաստացի արդյունքներով փողի բազան հունիսին աճել է 2.4 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 106.3 մլրդ դրամ՝ մոտ 500 մլն դրամով ցածր տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմանից:

Փողի բազայի աճը պայմանավորվել է բացառապես ՀՀ ԿԲ ՁԱԱ-ի շարժերով, որոնք հանգեցրել են այդ ցուցանիշի 5.4 մլրդ դրամով աճին՝ ամսվա վերջին ապահովելով 139.7 մլրդ դրամ մակարդակ: Արտարժութային պահուստներն ավելացել են հիմնականում նախորդ ամսվա ընթացքում կիրառված սվոփ գործառնությունների մարման (շուրջ 3.5 մլրդ դրամ), 1.0 մլրդ դրամին համարժեք դրամաշնորհի ստացման և 1.9 մլրդ դրամի այլ արտարժութային մուտքերի հաշվին: Միևնույն ժամանակ, վճարվել է 985 մլն դրամին համարժեք արտաքին պարտքի տոկոսագումար:

ԿԲ ՁԱԱ-ի նման մեծածավալ աճը 3.0 մլրդ դրամով չեզոքացվել է ԿԲ ՁՆԱ-ի նվազմամբ, որի կառուցվածքում դրան նպաստել են ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների և զուտ այլ ակտիվների ցուցանիշների նվազումը՝ յուրաքանչյուրը 3.8 մլրդ դրամով: Դա հիմնականում պայմանավորվել է համապատասխանաբար Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 3.8 մլրդ դրամով ավելացմամբ և վերոնշյալ սվոփ գործառնությունների մարմամբ:

Ինչ վերաբերում է ԿԲ ՁՆԱ-ի մյուս կառուցվածքային տարրի՝ ԿԲ հանդեպ բանկերի պարտավորությունների ցուցանիշի վարքագծին, ապա այն աճել է 4.5 մլրդ դրամով՝ 2.36 մլրդ դրամով ավելի, քան ծրագրված էր: Դա հիմնականում պայմանավորվել է այն հանգամանքով, որ ներքաշող գործիքների նախատեսված մարումներին զուգահեռ ԿԲ կողմից բանկերին տրամադրվել է «Վերականգնման վարկերի բանկի» (KfW) վարկային ծրագրի շրջանակներում ստացված վարկի գումարից 2.4 մլրդ դրամ:

Փողի բազայի կառուցվածքում 3.4 մլրդ դրամով աճել է ԿԲ-ից դուրս կանխիկը և 1.0 մլրդ դրամով նվազել են ԿԲ-ում բանկերի և այլ կազմակերպությունների հաշիվների միջոցները: Չնայած դրան, հունիսին միջին ամսական հաշվարկով պահպանվել է ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակը՝ 5.0 մլրդ դրամ: Ընդ որում, դա ամսվա ընթացքում ունեցել է բավականին համաչափ բաշխվածություն՝ պայմանավորելով ներքաշող գործիքների կիրառման անհրաժեշտությունը ողջ ամսվա ընթացքում: Մասնավորապես, ամսվա առաջին կեսին բանկերի կողմից ԿԲ-ում ներդրվել է 1.5 մլրդ դրամի ավանդ, իսկ երկրորդին ԿԲ կողմից կնքվել է (զուտով) 1.4 մլրդ դրամի հակադարձ ռեպո համաձայնագիր:

Փողի զանգվածը (առանց կուտակված տոկոսների) հունիսին աճել է 4.6 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 232.0 մլրդ դրամ: Աճը կառուցվածքային տարրերի միջև բաշխվել է հետևյալ համամասնությամբ. շրջանառությունում գտնվող կանխիկն աճել է 3.5 մլրդ, իսկ ավանդները՝ 1.1 մլրդ դրամով: Ընդ որում, վերջինիս կառուցվածքում աճն ապահովվել է բացառապես արտարժութային ավանդների՝ 3.5 մլրդ դրամով ավելացման հաշվին, այն դեպքում, երբ արձանագրվել է դրամային ավանդների նվազում 2.4 մլրդ դրամով՝ հիմնականում ժամկետային ավանդների նվազման հետևանքով: Փողի զանգվածի դրա-

մային բաղադրատարրերի վերոնշյալ շարժերի արդյունքում դրամային զանգվածն աճել է 1.1 մլրդ դրամով և ամսվա վերջին կազմել 123.2 մլրդ դրամ:

Շրջանառությունում եղած կանխիկի աճի արդյունքում հունիսին դիտվել է ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի և դրամային բազմարկիչների փոքր-ինչ նվազում՝ նախորդ ամսվա համապատասխանաբար 2.19 և 1.18-ի փոխարեն կազմելով 2.18 և 1.16:

Ֆինանսական շուկայում հունիսին արձանագրվել է տոկոսադրույքների որոշակի նվազում: Մասնավորապես, ՊՊ առաջնային շուկայում տեղաբաշխված 9-12 ամսյա պարտատոմսերի եկամտաբերությունը նախորդ ամսվա 5.8%-ից իջել է 5.3%, իսկ 1 տարուց ավելի ժամկետայնությամբ պարտատոմսերինը նվազել 1 տոկոսային կետով՝ կազմելով 8.4%: Տոկոսադրույքների նվազում է դիտվել նաև երկրորդային շուկաներում (միջին հաշվով 0.4 տոկոսային կետ), ինչպես նաև տնտեսությունից ներգրավված և տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների գծով, ինչի արդյունքում դրանց միջին կշռված մեծությունը՝ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը ԿԲ կողմից իջեցվել է 1 տոկոսային կետով և սահմանվել 16%:

Չնայած շուկայական տոկոսադրույքների նվազման միտումներին, ՀՀ ԿԲ-ն անփոփոխ է թողել գործառնությունների տոկոսադրույքները. ռեպո համաձայնագրերինը՝ 6%, ավանդներինը՝ 1% և լոմբարդային վարկերինը՝ 20%՝ ելնելով իրացվելիության կարգավորումն այդ տոկոսադրույքներով իրականացնելու հնարավորությունից:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Անվանում	*2004 թ. հունվար – մայիս*	*2004 թ. հունվար-մայիսի իրական աճի ինդեքսը 2003 թ. հունվար-մայիսի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար – հունիս*	*2004 թ. հունվար – հունիսի իրական աճի ինդեքսը 2003 թ. հունվար – հունիսի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	430835.9	108.9	600715.3	109.2
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	106.6	-	106.2
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	389.4	108.7	-	-
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	195223.3	103.3	242768.4	104.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	2717.0	113.5	3215.4	117.3
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	72969.7	106.5	90382.6	106.8
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	269648.0	110.2	332506.2	110.1
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	45650.4	115.1	70726.1	112.1
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	430463.3	109.0[1,3]	534872.9	110.8[1,2]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	443671.0	108.8[1,3]	544689.0	109.9[1,2]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	39434.0	123.6[1, 3]	40014.0[2]	123.5[1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1224.4	-	-	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	118.0	-	-	-
Գործազրկության մակարդակը *(%)*	9.6	-	-	-

II. Արտաքին հատված

Անվանում	*2004 թ. հունվար-մայիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար-մայիսը 2003 թ. հունվար-մայիսի նկատմամբ (%)*	*2004 թ. հունվար–հունիս* *(մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար-հունիսը 2003 թ. հունվար-հունիսի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	274.4	108.0	340.0	107.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	511.5	107.6	625.1	103.8
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	237.0	107.2	285.1	100.0

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	99.5	100.3	98.5
Փետրվար	99.4	108.6	97.9	101.0
Մարտ	100.3	101.9	102.4	97.2
Ապրիլ	101.2	96.1	99.8	99.8
Մայիս	101.1	102.1	99.9	99.6
Հունիս	99.9	-	-	-
2004 թ. հունվար – հունիսը 2003 թ. հունվար – հունիսի համեմատությամբ	107.6	-	-	-

IV. Գնաճ

Ժամանակաշրջան	*2002*	*2003*	*2004*	*2004*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.2	4.1	2.5	2.5
Փետրվար	-0.7	-1.5	-0.6	1.9
Մարտ	-0.6	-0.5	0.3	2.2
Ապրիլ	2.5	2.0	1.2	3.5
Մայիս	1.7	1.2	1.1	4.7
Հունիս	-0.5	1.4	-0.1	4.5
Հուլիս	-5.0	-5.5		
Օգոստոս	-3.0	-2.3		
Սեպտեմբեր	-0.6	2.5		
Հոկտեմբեր	0.5	-0.1		
Նոյեմբեր	2.2	2.2		
Դեկտեմբեր	3.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	8.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	1.1	4.7		

V. Բնականոն գնաճի փոփոխությունները[1]

Ցուցանիշ	**1995**	**1996**	**1997**	**1998**	**1999**	**2000**	**2001**	**2002**	**2003**	**2004**
նախորդ ամսվա նկատմամբ, %										
Հունվար	3.03	2.07	0.99	2.80	0.34	0.25	0.46	0.35	0.69	0.65
Փետրվար	0.59	1.19	0.57	1.06	-0.12	-0.15	-0.12	-0.29	-0.46	0.05
Մարտ	1.58	-0.19	0.16	-0.23	-0.39	-0.33	-0.07	-0.17	0.00	0.03
Ապրիլ	5.08	-0.77	0.39	-0.96	-0.47	-0.26	0.02	0.39	0.23	0.05
Մայիս	3.51	-0.90	0.24	-0.89	-0.54	-0.27	0.18	-0.12	0.06	0.04
Հունիս	0.58	-0.61	2.22	-0.76	-0.11	-0.37	-0.02	-0.14	0.61	-0.13
Հուլիս	-1.69	-0.66	4.73	-0.32	0.00	-0.39	-0.31	-0.33	-0.55	
Օգոստոս	-1.22	0.23	0.55	-0.43	-0.28	-1.01	-0.12	-0.91	-0.18	
Սեպտեմբեր	0.12	-0.01	1.44	0.16	-0.32	-0.22	-0.37	-0.19	1.20	
Հոկտեմբեր	2.63	0.15	0.52	-0.01	-0.21	0.04	0.04	0.14	0.04	
Նոյեմբեր	2.21	0.93	0.59	0.31	-0.07	0.17	0.17	0.38	0.94	
Դեկտեմբեր	5.09	0.55	0.19	0.06	0.04	0.24	0.26	0.66	2.07	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ, %										
Հունվար	321.07	33.70	9.10	18.57	-1.18	-2.75	0.04	0.71	1.16	4.45
Փետրվար	268.83	40.09	1.44	18.86	-2.64	-3.08	-0.02	0.34	0.86	5.60
Մարտ	179.63	39.43	1.22	18.08	-2.75	-3.13	0.22	-0.06	1.04	6.37
Ապրիլ	116.85	29.06	2.86	14.25	-2.93	-2.88	0.49	0.77	0.37	6.39
Մայիս	70.63	25.39	4.94	12.96	-1.95	-2.48	0.99	0.38	0.49	6.23
Հունիս	60.29	14.46	7.26	10.89	-1.35	-2.75	0.71	0.74	2.44	5.41
Հուլիս	66.33	13.66	14.25	7.04	-0.98	-2.92	1.00	0.03	2.26	
Օգոստոս	61.60	12.46	14.35	5.56	-0.72	-3.77	1.84	-0.69	2.61	
Սեպտեմբեր	56.41	11.21	16.62	2.61	-1.28	-3.13	1.90	-0.99	5.33	
Հոկտեմբեր	53.23	6.95	16.56	1.87	-1.34	-3.24	1.78	-0.38	4.65	
Նոյեմբեր	48.06	6.01	16.34	0.43	-1.82	-2.98	1.73	0.08	4.23	
Դեկտեմբեր	22.86	3.12	16.60	-0.36	-1.57	-2.39	1.51	0.71	4.67	

VI.Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող 10 ապրանքատեսակները[1]

Անվանում	***Նպաստումը բնականոն գնաճին, տոկոսային կետ***
նախորդ ամսվա նկատմամբ, %	
Բնականոն գնաճ, *այդ թվում*	**-0.13**
ալյուր 1-ին տեսակի	-0.07
էլեկտրաէներգիա	-0.07
թռչնի միս	0.03
շաքարավազ	-0.03
միջքաղաքային երթուղային տաքսի	0.02
հաց 1-ին տեսակի	-0.02
հեռախոսի վարձ	0.01
բուսական յուղ (արևածաղկի)	-0.01
խոզի միս	0.01
հաց բարձր տեսակի	0.01

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:
[3] Տվյալները ճշգրտվել են ՀՀ ԱՎԾ կողմից ՍԳԻ կուտակային ցուցանիշների վերանայման արդյունքում:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]


(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության ընկատմամբ				Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության ընկատմամբ[2]	Զուտ պահանջներ Կառավարության ընկատմամբ[2,3]
	պետական կարճաժամկետ արժեթղթերի պորտֆելի շուկայական արժեքով	պետական երկարաժամկետ արժեթղթերի պորտֆելի շուկայական արժեքով	պետական ոչ շուկայական արժեթղթեր	Ընդամենը	ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության հաշվին ընթացիկ հաշիվների մնացորդներ	Կառավարության հաշվին վճարային փոխանցումների ընթացքում գտնվող միջոցներ	ՕՀԴ-երի միջոցներ հաշվին	ՕՀԴ-երի միջոցներ արժեթղթերով	Ընդամենը		
2003											
Դեկտեմբեր	0	1047	0	1047	32357	156	41	0	32554	**-31507**	***-31800***
2004											
Հունվար	0	1047	0	1047	41597	156	3	0	41757	**-40710**	***-40804***
Փետրվար	0	1047	0	1047	42325	156	0	0	42481	**-41434**	***-41624***
Մարտ	0	0	0	0	35028	155	0	0	35184	**-35184**	***-35507***
Ապրիլ	0	1055	0	1055	37412	151	0	0	37563	**-36508**	***-36537***
Մայիս	0	3710	0	3710	32052	152	9	0	32212	**-28502**	***-28502***
Հունիս	0	3710	0	3710	35843	148	8	0	35999	**-32289**	***-32285***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության ընկատմամբ պահանջների և Կառավարության ավանդների տարբերությունը:


[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ [1, 2]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ[3]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ [4]	Ընդամենը
2003			
Դեկտեմբեր	12279	32554	44833
2004			
Հունվար	12107	41757	53864
Փետրվար	12452	42481	54933
Մարտ	13353	35184	48537
Ապրիլ	13608	37563	51171
Մայիս	13587	32212	45798
Հունիս	12946	35999	48946



[1] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ: Ներկայացված տվյալները հաշիվների մնացորդներն են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

[2] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[3] Ընդգրկված են առևտրային բանկերի ցպահանջ և ժամկետային պարտավորությունները Գանձապետարանի նկատմամբ՝ բացառությամբ ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ պարտավորությունների:

[4] Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՏԻԳ-երի միջոցները:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[4]	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04	Հ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***153802***	***151496***	***148209***	***145491***	***141524***	***134241***	***139660***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-35216***	***-48377***	***-48226***	***-42062***	***-37434***	***-30394***	***-33408***
Կառավարություն	-31507	-40710	-41434	-35184	-36508	-28502	-32289
Բանկեր	8600	4375	3487	4344	6205	4599	9096
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0	0	0	0
ավանդներ (-)	-100	-3300	-2150	-3710	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	-1025	-1031	0	0	-924	-2304
Արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	-2032	-646	-2795	-3478	0
Զուտ այլ ակտիվներ	-12309	-12042	-10279	-11222	-7131	-6491	-10215
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***116654***	***105172***	***101742***	***103573***	***102790***	***103077***	***106847***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***118586***	***103119***	***99983***	***103429***	***104090***	***103847***	***106252***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	96838	83686	84225	84317	83499	83631	87022
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	21047	18856	15243	18155	20088	19402	18732
Այլ հաշիվներ	700	577	515	957	503	814	498
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	657	517	493	528	481	810	457
Այլ հաշիվներ (արտարժույթով)	43	60	21	429	22	4	41
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-2306***	***-3287***	***-2718***	***-3967***	***-7283***	***5419***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13161***	***151***	***6164***	***4628***	***7040***	***-3014***
Կառավարություն	-	-9203	-724	6250	-1324	8006	-3787
Բանկեր	-	-4225	-888	857	1861	-1606	4497
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3200	-1150	1560	-3710	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	267	1763	-943	4091	640	-3724
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-11482***	***-3430***	***1831***	***-783***	***288***	***3770***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-15467***	***-3136***	***3446***	***661***	***-243***	***2405***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13152	539	92	-818	132	3391
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-2191	-3613	2912	1933	-686	-670
Այլ հաշիվներ	-	-123	-62	442	-454	311	-316
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-140	-24	35	-47	329	-353
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	17	-39	408	-407	-18	37
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-1.5***	***-2.2***	***-1.8***	***-2.7***	***-5.1***	***4.0***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-37.4***	***0.3***	***12.8***	***11.0***	***18.8***	***-9.9***
Կառավարություն	-	-29.2	-1.8	15.1	-3.8	21.9	-13.3
Բանկեր	-	-49.1	-20.3	24.6	42.8	-25.9	97.8
Զուտ այլ ակտիվներ	-	2.2	14.6	-9.2	36.5	9.0	-57.4
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***-3.3***	***1.8***	***-0.8***	***0.3***	***3.7***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-13.0***	***-3.0***	***3.4***	***0.6***	***-0.2***	***2.3***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.6	0.6	0.1	-1.0	0.2	4.1
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-10.4	-19.2	19.1	10.6	-3.4	-3.5
Այլ հաշիվներ	-	-17.6	-10.7	85.8	-47.4	61.8	-38.8

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱԱ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջին:

[4] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[3]	Հ – 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04	Հ - 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**40586**	**43037**	**42114**	**43607**	**39074**	**42442**	40235
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97945	101612	107518	106957	93605	97325	98713
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-54608	-55919	-62767	-60710	-52144	-52058	-55532
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-2750	-2656	-2637	-2640	-2388	-2825	-2946
ՋՆԱ	**100535**	**98225**	**99613**	**102516**	**107348**	**106180**	109716
Կառավարություն	16902	16184	16484	17318	17930	16387	18038
Ջուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	16607	18601	15809	17876	17850	19201	13784
Պահուստային ակտիվներ	25478	27360	24623	26750	26908	28321	25368
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-8870	-8759	-8814	-8874	-9058	-9119	-11584
Տնտեսություն	103218	101543	106737	109837	115217	117277	121018
Ձեռնարկություններ	61094	59714	62114	62528	64608	65074	67201
Դրամով	22875	23017	23412	22192	22953	24122	25324
Արտարժույթով	38183	36661	38666	40299	41623	40921	41848
Արժեթղթեր	37	37	37	37	32	32	29
Տնային տնտեսություններ	35384	35916	38297	41222	43184	46330	47372
Դրամով	7839	7836	8353	8731	9409	10362	10871
Արտարժույթով	27544	28079	29944	32491	33775	35968	36501
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33	25	34	43
Դրամով	12	13	14	9	12	25	34
Արտարժույթով	47	23	21	24	13	10	9
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018	7398	5838	6401
Դրամով	2145	1752	1874	2411	2627	1566	2179
Արտարժույթով	4500	4090	4380	3607	4771	4273	4223
Այլ ռեզիդենտներ[2]	37	37	37	36	1	1	1
Դրամով	0	0	0	0	0	0	0
Արտարժույթով	37	37	37	36	1	1	1
Ջուտ այլ ակտիվներ	-36193	-38103	-39417	-42515	-43650	-46686	-43123
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3028	2784	2799	2170	2224	1892	2375
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	1974	12319	15827	12148	2170	3388	4071
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-412	-10571	-14553	-10828	-1047	-1971	-2605
Ներդրումներ փայաբաժիններում	514	501	501	456	458	458	463
Միջբանկային պահանջներ	3574	4793	4764	4541	5280	5040	6512
Այլ ակտիվներ	26558	27114	26839	25608	26285	26764	30042
Միջբանկային պարտավորություններ	-3544	-4654	-4660	-4491	-5232	-4818	-6457
Դրամական շուկայի գործիքներ	-562	-566	0	0	0	0	0
Կապիտալ հաշիվներ	-55148	-54195	-55428	-56376	-56873	-56862	-58872
Այլ պարտավորություններ	-12175	-15628	-15506	-15744	-16915	-20576	-18651
ԱՎԱՆԴՆԵՐ	**141121**	**141262**	**141727**	**146123**	**146421**	**148622**	149951
Դրամով ավանդներ	40756	40476	38928	39744	41043	42743	40651
Ցպահանջ ավանդներ	30618	26540	26298	26284	28080	28337	28398
Ժամկետային ավանդներ	10138	13936	12629	13459	12963	14406	12253
Ավանդներ արտարժույթով	100365	100785	102799	106379	105378	105879	109300
Ցպահանջ ավանդներ	51034	48978	49878	54173	52273	52863	55355
Ժամկետային ավանդներ	49331	51808	52922	52206	53105	53016	53946

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[3] Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[6]	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ – 04	Հ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***194389***	***194533***	***190323***	***189098***	***180598***	***176683***	***179895***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39429***	***26434***	***31603***	***37516***	***45493***	***51510***	***52807***
Կառավարություն	-14605	-24525	-24950	-17866	-18577	-12115	-14252
Տնտեսություն	103257	101576	106777	109876	115261	117320	121081
Ձեռնարկ. և կազմակերպ.	61131	59751	62151	62564	64609	65075	67202
որից՝ կուտակված տոկոսներ	455	497	478	531	539	596	603
Տնային տնտեսություններ	35422	35949	38337	41261	43229	46372	47435
որից՝ կուտակված տոկոսներ	474	534	564	641	616	689	719
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33	25	34	43
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018	7398	5838	6401
որից՝ կուտակված տոկոսներ	71	43	58	60	67	59	46
Զուտ այլ ակտիվներ	-49223	-50617	-50224	-54494	-51191	-53695	-54023
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [3]	***133230***	***119963***	***118916***	***119620***	***120496***	***122117***	***123171***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	***233198***	***220283***	***221244***	***225903***	***225358***	***227448***	***232002***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [4]	***233818***	***220967***	***221926***	***226614***	***226091***	***228193***	***232702***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	91997	79128	79685	79535	79166	78757	82253
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	31275	27057	26791	26812	28561	29147	28855
կուտակված տոկոսներ	17	16	28	22	26	39	35
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629	13459	12963	14406	12253
կուտակված տոկոսներ	163	142	163	164	168	154	154
Արտարժույթով ավանդներ	100408	100846	102820	106808	105400	105883	109341
Ցպահանջ[5]	51076	49038	49899	54602	52296	52867	55396
կուտակված տոկոսներ	5	6	12	7	9	15	8
Ժամկետային	49331	51808	52922	52206	53105	53016	53946
կուտակված տոկոսներ	435	520	480	518	530	537	501
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ՁՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***144***	***-4210***	***-1225***	***-8500***	***-3915***	***3212***
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-12995***	***5169***	***5913***	***7976***	***6017***	***1297***
Կառավարություն	-	-9920	-425	7084	-711	6462	-2137
Տնտեսություն	-	-1681	5201	3099	5385	2059	3761
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-1380	2400	413	2045	466	2126
որից՝ կուտակված տոկոսներ	-	42	-19	53	8	57	7
Տնային տնտեսություններ	-	527	2388	2924	1968	3143	1063
որից՝ կուտակված տոկոսներ	-	60	30	77	-25	73	30
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-24	0	-2	-8	9	9
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-804	413	-236	1380	-1560	563
որից՝ կուտակված տոկոսներ	-	-28	15	2	7	-8	-13
Զուտ այլ ակտիվներ	**-**	-1394	393	-4270	3302	-2503	-328
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	**-**	***-13267***	***-1048***	***705***	***876***	***1621***	1054
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	**-**	***-12915***	***961***	***4659***	***-545***	***2090***	4554
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	**-**	***-12851***	***959***	***4688***	***-523***	***2102***	4509
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-12869	557	-150	-369	-409	3496
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-4218	-266	21	1749	586	-292
կուտակված տոկոսներ	-	-1	12	-6	4	13	-4
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307	830	-496	1443	-2153
կուտակված տոկոսներ	-	-21	21	2	4	-14	0
Արտարժույթով ավանդներ	-	438	1974	3988	-1408	483	3458
Ցպահանջ	-	-2038	861	4703	-2307	572	2529
կուտակված տոկոսներ	-	1	6	-5	2	6	-7
Ժամկետային	-	2477	1114	-716	899	-89	930
կուտակված տոկոսներ	-	85	-40	38	12	7	-36

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***0.1***	***-2.2***	***-0.6***	***-4.5***	***-2.2***	***1.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-33.0***	***19.6***	***18.7***	***21.3***	***13.2***	***2.5***
Կառավարություն	-	-67.9	-1.7	28.4	-4.0	34.8	-17.6
Տնտեսություն	-	-1.6	5.1	2.9	4.9	1.8	3.2
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	- 2.3	4.0	0.7	3.3	0.7	3.3
Տնային տնտեսություններ	-	1.5	6.6	7.6	4.8	7.3	2.3
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-40.7	0.7	-6.4	-24.2	36.0	25.8
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-12.1	7.1	-3.8	22.9	-21.1	9.7
Զուտ այլ ակտիվներ	-	-2.8	0.8	-8.5	6.1	-4.9	-0.6
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	***-10.0***	***-0.9***	***0.6***	***0.7***	***1.3***	***0.9***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	-	***-5.5***	***0.4***	***2.1***	***-0.2***	***0.9***	***2.0***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	***-5.5***	***0.4***	***2.1***	***-0.2***	***0.9***	***2.0***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-14.0	0.7	-0.2	-0.5	-0.5	4.4
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-13.5	-1.0	0.1	6.5	2.1	-1.0
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	37.5	-9.4	6.6	-3.7	11.1	-14.9
Արտարժույթով ավանդներ	-	0.4	2.0	3.9	-1.3	0.5	3.3
Ցպահանջ	-	-4.0	1.8	9.4	-4.2	1.1	4.8
Ժամկետային	-	5.0	2.1	-1.4	1.7	-0.2	1.8

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ԶԱՀ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱՀ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31258	123255	9975	133230	99967	233197
2004							
Հունվար	79128	27041	106169	13794	119963	100320	220283
Փետրվար	79685	26763	106449	12467	118916	102328	221244
Մարտ	79535	26790	106325	13295	119620	106283	225903
Ապրիլ	79166	28535	107701	12795	120496	104861	225358
Մայիս	78757	29108	107865	14252	122117	105331	227448
Հունիս	82253	28820	111072	12098	123171	108832	232002

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1,3]

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [4]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [5]	Արտարժույթով ավանդներ	M2X [6]
2003							
Դեկտեմբեր	91997	31275	123272	10138	133410	100408	233818
2004							
Հունվար	79128	27057	106185	13936	120121	100846	220967
Փետրվար	79685	26791	106476	12629	119106	102820	221926
Մարտ	79535	26812	106347	13459	119806	106808	226614
Ապրիլ	79166	28561	107727	12963	120690	105400	226091
Մայիս	78757	29147	107904	14406	122310	105883	228193
Հունիս	82253	28855	111108	12253	123360	109341	232702

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:


[2] Ավանդների մեջ կուտակված տոկոսները չեն ընդգրկված:


[3] Ավանդների մեջ ընդգրկված են կուտակված տոկոսները:


[4] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[5] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և դրամով ժամկետային ավանդները:


[6] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):



Փողի բազան տատանումների թույլատրելի միջակայքում
մլն ՀՀ դրամ
122500
120000
117500
115000
112500
110000
107500
105000
102500
100000
97500
05.01.04
13.01.04
20.01.04
27.01.04
03.02.04
10.02.04
17.02.04
24.02.04
02.03.04
10.03.04
17.03.04
24.03.04
30.03.04
06.04.04
13.04.04
20.04.04
27.04.04
04.05.04
11.05.04
18.05.04
25.05.04
02.06.04
09.06.04
16.06.04
23.06.04
30.06.04
Փողի բազա
Ծրագիր
Ծրագիր՝ +2%
Ծրագիր՝ -2%



Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
120000
105000
90000
75000
60000
45000
30000
01
02
03
04
Կանխիկ դրամ ԿԲ-ից դուրս
Պարտ. պահուստ. դրամով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
250000
200000
150000
100000
50000
0
01
02
03
04
Շրջանառությունում կանխիկ դրամ
Ցպահանջ ավանդներ դրամով
Ժամկետային ավանդներ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
70
65
60
55
50
45
40
35
30
25
20
98
99
00
01
02
03
04


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
100
90
80
70
60
50
98
99
00
01
02
03
04


Փողի բազայի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը
%
30
25
20
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի բազա
Գնաճ


Փողի զանգվածի ամսական փոփոխությունը և ամսական գնաճը
%
15
10
5
0
-5
-10
-15
01
02
03
04
Փողի զանգված
Գնաճ


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2003					
Դեկտեմբեր	106262	81040	111270	122636	221576
2004					
Հունվար	103077	77843	104826	118884	219461
Փետրվար	102977	81912	110603	122571	227609
Մարտ	107632	81770	111460	123923	230579
Ապրիլ	107642	82574	112767	124901	235051
Մայիս	106484	81799	111088	124344	233803
Հունիս	111407	85949	115359	126984	238064

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալների ի հայտ գալուն զուգահեռ, համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակնե



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները




Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]

(մլն ՀՀ դրամ)

Ցուցանիշներ	2003	2004					
	Դ [4]	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Կենտրոնական բանկի ԶԱԱ	153802	151496	148209	145491	141524	134241	139660
Առևտրային բանկերի ԶԱԱ	40586	43037	42114	43607	39074	42442	40235
Ընդամենը	194389	194533	190323	189098	180598	176683	179895
Կենտրոնական բանկի ԶԱԱ [3]	***154968***	***152768***	***149532***	***146520***	***142348***	***134901***	***140486***



[1] *Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:*

[2] *ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առևտրային բանկերի ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:*

[3] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*

[4] *Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: Կատարվել է հաշիվների վերադասակարգում համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:*

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04	Հ - 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	-651	-649	-656	-615	-662	-625	-585
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97	82	90	141	100	110	104
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-748	-731	-746	-756	-762	-734	-689
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-	-	-	-	-	-	-
ԶՆԱ	741	748	769	759	816	776	743
Կառավարություն	70	75	78	51	59	-41	-47
Զուտ պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	407	396	351	496	570	380
Պահանջներ առևտրային բանկերի նկատմամբ	282	417	396	352	497	572	417
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-	-9	-	-0.5	-1	-1	-37
Տնտեսություն	2453	2354	2260	2039	2092	2152	2260
Ձեռնարկություններ	1305	1190	1153	922	844	837	839
Դրամով	289	266	296	120	111	128	263
Արտարժույթով	1015	924	856	803	734	709	575
Արժեթղթեր	-	-	-	-	-	-	-
Տնային տնտեսություններ	1116	1132	1076	1085	1228	1296	1403
Դրամով	676	688	595	552	664	685	711
Արտարժույթով	440	444	481	533	564	611	692
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	33	32	31	31	19	19	18
Դրամով	-	-	-	-	-	-	-
Արտարժույթով	33	32	31	31	19	19	18
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-	-	-	-	-	-
Դրամով	-	-	-	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-	-	-	-
Այլ ռեզիդենտներ	-	-	-	-	-	-	-
Դրամով	-	-	-	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-	-	-	-
Զուտ այլ ակտիվներ	- 2064	-2089	-1965	-1682	-1830	-1906	-1850
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	8	-	4	7	72	3	25
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-	-	-
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-	-	-	-	-	-
ՀՀ դրամ դրամարկղում	32	49	45	79	30	104	28
Ներդրումներ փայաբաժիններում	-	-	-	-	-	-	-
Պահանջներ վարկային կազմակերպություններին	-	-	-	-	-	-	-
Այլ ակտիվներ	520	508	513	520	597	596	810
Պարտավորություն. վարկային կազմակերպություններին	-	-	-	-	-	-	-
Դրամական շուկայի գործիքներ	-	-	-	-	-	-	-
Դրամաշնորհներ	-190	-11	-21	-16	-82	-77	-90
Կապիտալ հաշիվներ	-2205	-2388	-2276	-2049	-2254	-2329	-2342
Այլ պարտավորություններ	-229	-247	-230	-223	-193	-203	-282
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	91	99	113	144	155	151	158
Դրամով փոխառություններ	-	-	-	-	-	-	14
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	-	-	-	-	-	-	14
Արտարժույթով փոխառություններ	91	99	113	144	155	151	144
Ցպահանջ փոխառություններ	-	-	-	-	-	-	-
Ժամկետային փոխառություններ	91	99	113	144	155	151	144

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ-03[3]	Հ-04	Փ-04	Մ-04	Ա - 04	Մ - 04	Հ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	***193738***	***193884***	***189666***	***188483***	***179936***	***176059***	***179310***
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	153802	151496	148209	145491	141524	134241	139660
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	40586	43037	42114	43607	39074	42442	40235
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-651	-649	-656	-615	-662	-625	-585
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39856***	***26716***	***31931***	***37845***	***45782***	***51610***	***53104***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-14535**	**-24450**	**-24872**	**-17815**	**-18519**	**-12155**	**-14298**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-31507	-40710	-41434	-35184	-36508	-28502	-32289
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	16902	16184	16484	17318	17930	16387	18038
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	70	75	78	51	59	-41	-47
Պահանջներ տնտեսությանը	**105710**	**103922**	**109037**	**111914**	**117352**	**119470**	**123304**
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	38	34	40	39	45	42	63
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	103218	101534	106737	109836	115216	117276	120981
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	2453	2354	2260	2039	2092	2152	2260
Այլ ակտիվներ (զուտ)	**-51318**	**-52756**	**-52234**	**-56254**	**-53051**	**-55705**	**-55901**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***233594***	***220600***	***221597***	***226328***	***225718***	***227669***	***232415***
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	91965	79079	79640	79456	79136	78653	82225
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	31080	26751	26555	26558	28373	28917	28669
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629	13459	12963	14306	12202
Արտարժույթով ավանդներ	100321	100734	102660	106711	105092	105641	109161
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	91	99	113	144	155	151	158
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)							
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1]	**-**	***146***	***-4218***	***-1184***	***-8547***	***-3877***	***3252***
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	**-**	-2306	-3287	-2718	-3967	-7283	5419
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	**-**	2451	-923	1493	-4533	3369	-2207
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-	2	-8	42	-47	37	40
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-13141***	***5215***	***5914***	***7937***	***5828***	***1494***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	-	**-9915**	**-422**	**7057**	**-704**	**6364**	**-2143**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-	-9202	-724	6250	-1324	8006	-3788
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	-	-718	300	834	613	-1544	1651
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-	5	3	-27	8	-99	-6
Պահանջներ տնտեսությանը	-	-1788	5116	2877	5438	2118	3834
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	-	-4	6	0	5	-2	20
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	-	-1685	5204	3099	5379	2060	3705
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	-	-99	-94	-221	53	60	108
Այլ ակտիվներ (զուտ)	-	**-1438**	**522**	**-4020**	**3203**	**2654**	**-197**
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	***-12995***	***997***	***4731***	***-609***	***1950***	***4746***
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-12886	561	-184	-320	-483	3572
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [2]	-	-4329	-196	2	1815	545	-249
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307	830	-497	1343	-2104
Արտարժույթով ավանդներ	-	413	1926	4051	-1619	549	3520
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	-	8	14	31	11	-4	7

[1] ԶԱԱ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ԶԱԱ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱԱ-ն փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:
[3] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)


Անվանումը	2003 [3]	2004					
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	502.0	499.3	489.6	481.5	466.4	474.7	480.4
Համախառն միջազգային պահուստներ	510.2	507.7	498.0	489.9	475.4	484.0	489.6
Ոսկի	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	18.8	18.8	13.7	13.7	25.5	25.9	17.7
Արտարժույթ [2]	491.4	489.0	484.3	476.2	449.8	458.1	471.9
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [4]	***504.1***	***501.7***	***492.2***	***483.6***	***468.2***	***476.4***	***481.9***

[1] *Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են հիմք ընդունելով 2003 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այս պատճառով 2003 թ. դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2003 թ. դեկտեմբեր, 2004 թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:*

[4] *Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:*



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2003[3]	2004					
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ
Վարկեր [1]							
Իրավաբանական անձանց							
ՀՀ դրամով	21.7	24.4	18.2	21.5	20.9	24.2	19.2
ԱՄՆ դոլարով	17.7	19.0	15.9	16.4	12.4	18.9	17.2
Ֆիզիկական անձանց							
ՀՀ դրամով	23.9	22.4	22.6	20.9	23.6	22.0	23.4
ԱՄՆ դոլարով	25.4	27.5	16.6	26.4	25.3	25.2	24.9
Ավանդներ [1]							
Իրավաբանական անձանցից							
ՀՀ դրամով	6.1	8.2	6.8	5.2	7.0	7.3	3.5
ԱՄՆ դոլարով	6.7	5.4	5.2	0.5	2.0	5.7	4.0
Ֆիզիկական անձանցից							
ՀՀ դրամով	6.5	8.6	3.9	5.7	5.6	7.8	4.7
ԱՄՆ դոլարով	6.1	5.2	4.3	5.9	5.8	5.9	5.8
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	7.0	7.0	7.0	6.0	6.0	6.0	6.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	3.5	3.5	3.5	3.0	1.0	1.0	1.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	9.7	7.5	6.4	5.9	5.8	5.8	5.3
Գնաճ	8.6	2.5	-0.6	0.3	1.2	1.1	-0.1


[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:


[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Գնաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ


Ամսաթիվ	Դ - 03	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04	Հ - 04
1	566.17	-	-	563.75	561.29	-	548.12
2	566.55	-	565.47	564.11	560.93	-	548.02
3	566.55	-	565.31	564.80	-	547.92	547.01
4	566.34	-	565.31	564.30	-	547.77	546.24
5	566.53	568.48	564.54	564.66	560.46	548.81	-
6	-	-	564.37	-	559.98	550.47	-
7	-	568.48	-	-	559.98	554.56	545.57
8	566.53	569.07	-	-	560.27	-	545.72
9	566.53	568.96	564.45	564.74	560.06	-	545.72
10	568.01	-	564.71	564.79	-	555.08	545.86
11	567.71	-	564.44	565.03	-	555.59	546.08
12	567.34	569.78	564.25	562.42	560.00	556.65	-
13	-	569.74	563.84	-	558.82	556.89	-
14	-	569.55	-	-	558.61	557.45	546.59
15	566.90	568.94	-	562.19	558.54	-	546.83
16	566.74	569.66	563.61	562.30	558.16	-	546.12
17	566.12	-	563.61	561.87	-	556.81	545.63
18	565.79	-	563.52	562.78	-	556.81	545.02
19	565.21	570.00	563.94	562.67	557.59	555.37	-
20	-	568.98	564.07	-	559.52	553.97	-
21	-	568.67	-	-	557.26	553.18	544.25
22	563.88	568.35	-	562.38	555.80	-	542.68
23	562.16	568.11	564.07	562.29	555.16	-	541.84
24	561.52	-	564.45	561.55	-	550.66	540.57
25	562.00	-	564.23	561.62	-	549.44	539.25
26	562.83	567.82	564.60	561.87	552.96	548.95	-
27	562.83	567.47	564.32	561.87	551.88	548.40	-
28	562.83	-	564.32	-	548.94	-	538.13
29	563.27	566.25	-	561.43	547.69	-	535.99
30	566.00	566.04	-	561.55	547.11	-	534.49
31	-	566.04	-	561.55	-	548.40	-
ժամանակահատվածի վերջ	566.00	566.04	564.32	561.55	547.11	548.40	534.49
ժամանակահատվածի միջին	565.26	568.44	564.35	562.89	556.86	552.66	543.90






ՀՀ ԴՐԱՄ / ԵՎՐՈ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 03	Հ - 04	Փ - 04	Մ - 04	Ա - 04	Մ - 04	Հ - 04
1	679.06	-	-	700.06	686.12	-	668.60
2	680.94	-	700.28	704.23	691.07	-	670.28
3	678.44	-	704.43	700.46	-	654.60	671.51
4	685.40	-	711.44	685.23	-	654.75	667.83
5	684.03	710.37	707.03	685.89	690.37	661.92	-
6	-	-	710.15	-	675.22	667.50	-
7	-	720.55	-	-	677.02	671.90	665.76
8	684.76	721.52	-	-	677.98	-	672.27
9	692.19	718.82	707.20	688.53	677.45	-	670.91
